

## Արձանագրություն N°10

«06» հունիսի 2022 թ.

գ.Երանոս

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի N°1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում տեղի ունեցավ հաստատության կառավարման խորհրդի նիստ:

Նիստը նախագահում էր կառավարման խորհրդի նախագահ՝ Ս.Բավեյանը:

Նիստին մասնակցում էին կոլեգիալ կառավարման խորհրդի ինը անդամներից ութը անդամ:

Խորհրդակցական ձայնի իրավունքով նիստին մասնակցում էր հաստատության տնօրեն՝ Ա.Փինայանը:

Օրակարգում.

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի N°1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2021-2022 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների քննարկում:

(Զեկուցող՝ Ս.Բավեյան)

Օրակարգի հարցի վերաբերյալ ձայնը տրվեց հաստատության տնօրեն Ա.Փինայանին:

Նա ներկայացրեց, որ 2021-2022 ուսումնական տարում 13.09.2021 թվականի դրությամբ դպրոցում կոմպլեկտավորվել է 17(տասնյոթ) դասարան՝ 396 աշակերտով:

Տարրական (I-IV) 7 դասարան՝ 155 աշակերտով, միջին (V-IX) 7 դասարան՝ 169 աշակերտով, ավագ (X-XII) 3 դասարան՝ 72 աշակերտով:

Ուսումնական տարվա ընթացքում դպրոց են ընդունվել 6 աշակերտ, դպրոցից տեղափոխվել են՝ 9 աշակերտ: Ուսումնական տարվա առաջին կիսամյակի վերջին մնացել են 391 աշակերտ:

Ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի սկզբում կոմպլեկտավորվել է 391 աշակերտ:

Տարրական (I-IV) 154 աշակերտ, միջին (V-IX) 166 աշակերտ, ավագ (X-XII) 71 աշակերտ:

Կիսամյակի ընթացքում դպրոցից տեղափոխվել են 10 աշակերտ, ընդունվել են՝ 6 աշակերտ: Ուսումնական տարվա վերջում դպրոցն ավարտել են 387 աշակերտ:

Գերազանց առաջադիմությամբ դպրոցն ավարտել են 105 աշակերտ, հարվածային՝ 91 աշակերտ, միջակ՝ 191 աշակերտ: Չեն գնահատվել 37 առաջին դասարանցիներ:

4-րդ դասարանի 32 աշակերտներ իրավունք են ստացել մասնակցելու գիտելիքների ստուգմանը, 9-րդ դասարանի 24 աշակերտներ իրավունք են ստացել մասնակցելու

ավարտական, կենտրոնացված ավարտական քննություններին և 12-րդ դասարանի 27 աշակերտներ մասնակցելու են պետական ավարտական քննություններին: 12-րդ դասարանի թվով 9 աշակերտներ հայտ են ներկայացրել մասնակցելու միասնական քննություններին:

Ուսումնական տարվա ընթացքում աշակերտները մասնակցել են տարածքային փուլի առարկայական օլիմպիադաներին, «Կենգուրի» և «Մեդու» մրցույթներին:

Ուսումնական տարվա ընթացքում դպրոցում կազմակերպվել է տարատեսակ միջոցառումներ, բաց դասեր, աշխատակիցները և աշակերտները մասնակցել են նաև կազմակերպված շաբաթօրյակներին:

Տնօրենը ներկայացրեց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմը, նշելով, որ սովորողներից մեկը՝ Հակոբյան Ֆրունզ Լևոնի 2020 թվականին դպրոց է ընդունվել Գավառի թիվ 1 հատուկ դպրոցից: Մեկ սովորող՝ Մինասյան Սերոբ Արտյոմի վկայագրվել է 2021 թվականի մարտ ամսին, իսկ երկու սովորողներ վկայագրվել են այս ուսումնական տարվա ընթացքում՝ Գինոյան Գոռ Ռուստամի և Հոխոյան Նարեկ Անդրանիկի: Նրանց յուրաքանչյուրի համար կազմվել է անհատական ուսուցման պլաններ, ցուցաբերվել է մանկավարժահոգեբանական աջակցություն և Գեղարքունիքի ՏՄԱԿ-ի աշխատակիցների կողմից ըստ կազմված դասացուցակի նրանցից յուրաքանչյուրի հետ կատարվել են անհատական աշխատանքներ:

2021-2022 ուսումնական տարում մանկավարժական կոլեկտիվը կատարել է աշխատանքային ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքները: Դասղեկների աշխատանքը տնօրինության կողմից գնահատվեց լավ:

Ուսումնական տարվա ընթացքում եղել են որոշակի աշխատանքային թերություններ, որոնք քննարկվել են և տրվել է համապատասխան հանձնարարականներ պատասխանատուներին հաջորդ ուսումնական տարում նման թերությունները շտկելու համար:

Արտահայտվեցին՝ Ս.Բավեյանը, Գ.Զուռնայանը, Կ.Խաչատրյանը:

Խորհուրդը որոշեց.

Հավանություն տալ 2021-2022 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության աշխատանքներին:

Խորհրդի նախագահ՝

Ս.Բավեյան

Քարտուղար՝

Կ.Խաչատրյան